

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

2021 թվականի հունվարի 1-ից հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ

1. «Պատերազմական գործողությունների հետևանքով հարկային արտոնություններ սահմանելու մասին» օրենքի համաձայն՝

1) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատված է ընդունվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը.

2) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հարկային և տեղական ինքնակառավարման մարմիններ ներկայացման ենթակա հաշվարկ-հաշվետվությունների, տեղեկությունների և այլ փաստաթղթերի ներկայացման ժամկետը սահմանվել է մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ.

3) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հարկերի և այլ պարտադիր վճարների (այդ թվում՝ գույքահարկի և հողի հարկի) վճարման ժամկետը սահմանվել է մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ.

4) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով դուրս չգրված հարկային հաշիվների դուրսգրման ժամկետը սահմանվել է մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ.

5) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին ապրանքների նվիրատվությամբ մատակարարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ակցիզային հարկից և (կամ) առևտրի հարկից.

6) հարկ վճարողների կողմից վաճառքի նպատակով ձեռքբերված ապրանքները պատերազմական գործողությունների հետևանքով փաստացի կորստի, ոչնչացման, վնասման կամ որակական հատկանիշների անկման դեպքում ենթակա են դուրսգրման փաստաթղթերով հիմնավորված չափով.

7) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում փաստացի գործունեություն չիրականացրած հարկ վճարողների գործունեությունը մինչև գործունեության վերսկսումը համարվում է ժամանակավոր դադարեցված՝ անկախ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ դիմում-հայտարարություն ներկայացված լինելու հանգամանքից.

8) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում փաստացի գործունեություն չիրականացրած՝ եռամսյա ժամկետում հարկային արտոնություններից օգտվող հարկ վճարողների հավաստագրի գործողությունը այդ ժամանակահատվածի համար կասեցվում է: Չներկայացված հավաստագրի օրինակը ենթակա է ներկայացման հարկային մարմին մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ, եթե հարկ վճարողը չի վերսկսել իր գործունեությունը.

9) գործունեությունը դադարեցրած հարկ վճարողների մասով փաստացի գործունեության չիրականացման ժամանակահատվածի համար հարկային մարմնի կողմից կատարվում է հաշվարկված հաստատագրված վճարների և արտոնագրային վճարների վերահաշվարկ, և ավել վճարված գումարները հաշվանցվում և (կամ) հարկ վճարողին վերադարձվում են «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն.

10) պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալները փաստացի նվազեցրած հարկ վճարողները այդ մասին մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ գրավոր տեղեկացնում են հարկային մարմնին՝ նոր հայտարարություն ներկայացնելու միջոցով, որի հիման վրա հարկային մարմնի կողմից կատարվում է հաստատագրված վճարի վերահաշվարկ, և ավել վճարված գումարները հաշվանցվում և (կամ) հարկ վճարողին վերադարձվում են «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն.

11) պատերազմական գործողությունների հետևանքով բացառապես Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության ներքո անցած համայնքներում փաստացի գործունեություն իրականացրած (բացառությամբ էներգետիկայի, հանքարդյունահանման բնագավառում գործունեություն իրականացնողների և իր բնույթով պայմանավորված

իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների (բացառությամբ ուղևորափոխադրման գործունեության)) առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ազատվում են՝

- հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունից,
- չվճարված հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների կատարումից: Արտոնությունը չի տարածվում սոցիալական վճարների և դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների վրա,
- գերավճարները վերադարձվում են առանց ստուգումների՝ կամերալ ուսումնասիրությամբ,
- լուծարման դեպքում տրամադրվում է տեղեկանք պարտավորությունների բացակայության վերաբերյալ,
- ապրանքային մնացորդները հարկային մարմնի տեղեկատվական բազայում գրոյացվում են ինքնաշխատ տարբերակով,
- 2020 թվականի համար կատարված շահութահարկի (եկամտային հարկի) կանխավճարներն ու եկամտային հարկի նվազագույն վճարները դիտվում են գերավճարներ.

12) սույն կետի 11-րդ ենթակետի դրույթները չեն տարածվում պետական և համայնքային կառավարչական հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների վրա.

13) կազմակերպությունները և ֆիզիկական անձինք ազատվում են պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում գտնվող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների, ինչպես նաև հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերի համար գույքահարկի և հողի հարկի գծով 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ չվճարված (այդ թվում՝ 2020 թվականի հաշվետու տարվա համար) պարտավորությունների կատարումից.

14) պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում գրանցված

(հաշվառված, հիմնական բնակություն հաստատած) կազմակերպությունները և ֆիզիկական անձինք ազատվում են գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ չվճարված պարտավորությունների կատարումից:

2. «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքի համաձայն՝

1) օրենքի գործողությունը տարածվում է այն հարկ վճարողների վրա, որոնք ունեն շահութահարկի, եկամտահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, հաստատագրված վճարների, առևտրի հարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների), տարեկան պետական տուրքի ու բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով ապառքներ, տույժեր և (կամ) տուգանքներ, ինչպես նաև հարկային օրենսդրությունը խախտելու համար սահմանված տուգանքներ (բացառությամբ օրենքով համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար սահմանված տուգանքների), «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» օրենքների պահանջների խախտման համար սահմանված տուգանքներ (այսուհետ՝ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություն)։

2) մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով մինչև 10 000 000 ՀՀ դրամ ներառյալ ապառքներ (այդ թվում՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ստուգման ակտերով) ունեցող հարկ վճարողներն ազատվում են ապառքների, տույժերի և (կամ) տուգանքների վճարումից։

3) մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով 10 000 000 ՀՀ դրամը գերազանցող ապառքներ (այդ թվում՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ստուգման ակտերով) ունեցող հարկ վճարողներն ազատվում են տույժերի և (կամ) տուգանքների վճարումից, ինչպես նաև 10 000 000 ՀՀ դրամ գումարի չափով ապառքների վճարումից՝ 10 000 000

ՀՀ դրամը գերազանցող ապառքները ժամանակացույցով և կարգով մարելու, ժամանակացույցի ավարտին ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ չունենալու դեպքում.

4) կախված հարկ վճարողի ապառքի մեծությունից՝ ժամանակացույցերը կազմվում են՝

- մինչև 3 մլն դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի դեպքում՝ տասներկուամսյա ժամկետով,

- 3-10 մլն դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի դեպքում՝ քսանչորսամսյա ժամկետով,

- 10-30 մլն դրամ (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի դեպքում՝ երեսունվեցամսյա ժամկետով,

- 30 մլն դրամ և ավելի (առանց արտոնության գումարի) հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքի դեպքում՝ քառասունութամսյա ժամկետով.

5) 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հարկային և այլ պարտադիր վճարների գծով բացառապես տույժեր և (կամ) տուգանքներ (այդ թվում՝ ստուգման ակտերով) ունեցող հարկ վճարողներն ազատվում են տույժերի և (կամ) տուգանքների վճարումից.

6) արտոնությունները տարածվում են նաև հարկ վճարողների այն պարտավորությունների վրա, որոնց մասով առկա են դատական վճիռներ և սնանկության վարույթներ.

7) հարկ վճարողների կողմից 2020 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ապառքները, տույժերը և (կամ) տուգանքները կամ դրանց մի մասը վճարած լինելու դեպքում հարկային մարմնի կողմից կատարվում է վերահաշվարկ, և ավել վճարված գումարները հաշվանցվում և (կամ) հարկ վճարողին վերադարձվում են «Հարկերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն:

3. ««Շահութահարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Շահութահարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների համաձայն՝

1) պատերազմական գործողությունների ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձի, նրա ամուսնու, համատեղությամբ ապրող զավակի կամ համատեղությամբ ապրող ծնողի նկատմամբ ձևավորված ու անհուսալի ճանաչված՝ հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված վարկի և այլ գումարները, ինչպես նաև մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և անհուսալի ճանաչվելուց հետո հաշվարկված տոկոսները, տույժերը և տուգանքները բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ներվելու դեպքում այդ գումարները համարվում են եկամուտ չհամարվող տարր, իսկ դեռևս անհուսալի չճանաչված վարկի գումարները, տոկոսները, տույժերը և տուգանքները բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ներվելու դեպքում դիտվում են որպես նվազեցվող եկամուտ.

2) բանկի և վարկային կազմակերպության կողմից պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց վարկերի և դեբիտորական պարտքերի գծով չվճարված տոկոսները, տույժերը և տուգանքները զիջելու դեպքում 2020 և 2021 թվականներին հարկվող շահույթը որոշելիս այդ գումարները դիտվում են որպես համախառն եկամտից նվազեցումներ.

3) 2020 թվականի հաշվետու տարվանից սկսած շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով հարկվող գործունեության տեսակների մասով շահութահարկի դրույքաչափը նվազեցվել է և սահմանվել 18 տոկոս.

4) էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների համար շահութահարկի դրույքաչափը 2021 թվականի հունվարի 1-ից սահմանվել է 10 տոկոս, 2023 թվականի հունվարի 1-ից՝ 5 տոկոս, իսկ 2024 թվականի հունվարի 1-ից՝ 18 տոկոս: Միաժամանակ, էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ)

մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների վրա օրենքի 38-րդ հոդվածով սահմանված արտոնությունը չի տարածվում, իսկ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը արտոնությունից օգտվող հարկ վճարողները շարունակում են օգվել արտոնությունից մինչև օրենքով սահմանված ժամկետի լրանալը: Ընդ որում, նրանց վրա ևս տարածվում է ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը չգերազանցելու դրույթը:

5) 2020-2022 թվականներին շահութահարկի վճարումից ազատվում են շահութահարկի 10 տոկոս դրույքաչափով հարկվող գործունեություն իրականացնող հարկ վճարողները, բացառությամբ էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների: 2023 թվականի հունվարի 1-ից շահութահարկի դրույքաչափը սահմանվում է 5 տոկոս: Հաշվի առնելով շահութահարկից ազատման արտոնությունը՝ 2020 թվականի համար կկատարվի շահութահարկի կանխավճարների վերահաշվարկ, և վճարված գումարները կդիտվեն գերավճարներ:

4. «Եկամտային հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Եկամտային հարկի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու ու ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների համաձայն՝

1) պատերազմական գործողությունների ժամանակահատվածում իրականացվող ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած կամ անհայտ կորած ֆիզիկական անձին, նրա ամուսնուն, համատեղությամբ ապրող զավակին կամ համատեղությամբ ապրող ծնողին ռեզիդենտ կազմակերպություն համարվող բանկերի կամ վարկային կազմակերպությունների տված վարկի գումարների ներման արդյունքում ֆիզիկական անձի եկամուտները եկամտային հարկով հարկման առումով դիտվում են որպես նվազեցվող եկամուտ:

2) սկսած 2021 թվականի հունվարի 1-ից հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձ իրականացվում է, եթե հարկային գործակալն ամբողջությամբ կատարել է տվյալ եռամսյակի բոլոր ամիսների համար հարկային մարմին ներկայացված՝ եկամտային հարկի հաշվարկով հայտարարագրված հարկային պարտավորությունը՝ առանց հաշվի առնելու նախորդ ժամանակահատվածների համար պարտավորությունների առկայությունը.

3) նվազեցվել է հարկային գործակալի կողմից պահվող եկամտային հարկի ամսական և հարկային գործակալի կողմից չհարկվող եկամուտներից եկամտային հարկի տարեկան դրույքաչափը՝ սահմանվելով 2021 թվականի համար՝ 15 տոկոս, 2022 թվականի համար՝ 14 տոկոս, իսկ 2023 թվականի հունվարի 1-ից՝ 13 տոկոս.

4) բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկ վճարողի մոտ վարձու աշխատանք կատարող ֆիզիկական անձանց համար աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը սահմանվել է 3 տոկոս.

5) անհատ ձեռնարկատերերի համար սահմանվել է եկամտային հարկի ժամկետային արտոնություն՝ 2020, 2021 և 2022 թվականներին ազատելով ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներից եկամտային հարկի վճարումից: Միաժամանակ, հնարավորություն է ընձեռվել անհատ ձեռնարկատերերին հրաժարվել նշված արտոնությունից՝ այդ մասին մինչև տվյալ հաշվետու տարվա հունվարի 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնելով գրավոր դիմում, իսկ նոր ստեղծված անհատ ձեռնարկատերերի համար դիմումի ներկայացման ժամկետ է սահմանվել մինչև հաշվառման ամսվան հաջորդող ամսվա 1-ը ներառյալ: 2020 և 2021 թվականների համար դիմումը ներկայացվում է մինչև 2021 թվականի փետրվարի 20-ը ներառյալ: Արտոնությունից հրաժարված՝ հարկման ընդհանուր համակարգով գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը կհաշվարկեն 13 տոկոս դրույքաչափով: Արտոնության ժամկետի ավարտից հետո՝ սկսած 2023 թվականի հունվարի 1-ից, հարկման ընդհանուր համակարգով աշխատող անհատ ձեռնարկատերերը կհարկվեն եկամտային հարկի 13 տոկոս դրույքաչափով.

6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը դիտվում է որպես համախառն եկամտից նվազեցվող եկամուտ, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց: Այս դրույթը տարածվում է այն արժեթղթերի վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը.

7) հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից վարկառու և համավարկառու ֆիզիկական անձանց ընտրությամբ միայն մեկ հիպոտեկային վարկի պայմանագրից օգտվելու պահանջը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից:

5. *«Ակցիզային հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի համաձայն՝*

1) խաղողի գինիների համար սահմանվել է ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափ՝ 150 ՀՀ դրամի չափով.

2) Արցախի Հանրապետությունում արտադրված ԱՏԳ ԱԱ 2207 ապրանքախմբի ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և 2208 ծածկագրին դասվող ապրանքների՝ Արցախի Հանրապետությունում օտարման գինը (ներառյալ ակցիզային հարկը և (կամ) ավելացված արժեքի հարկը) սահմանվել է ոչ պակաս քան 1 լիտրի համար 5 500 ՀՀ դրամ՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով, իսկ Արցախի Հանրապետության տարածք ներմուծված, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում արտադրված, սակայն Հայաստանի Հանրապետությունում օտարման դեպքում՝ օտարման գինը սահմանվել է ոչ պակաս քան 1 լիտրի համար 6 000 ՀՀ դրամ՝ 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով.

3) ակցիզային հարկ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 2208 20 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների օտարման դեպքում այդ ապրանքների օտարման գինը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի)՝ 100-տոկոսանոց սպիրտի

վերահաշվարկով, սահմանվել է ոչ պակաս քան 1 լիտրի համար՝ մինչև 3 տարի ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 5 000 ՀՀ դրամ, 4-ից մինչև 5 տարի ներառյալ՝ 5 500 ՀՀ դրամ, 6-ից մինչև 7 տարի ներառյալ՝ 6 000 ՀՀ դրամ, 8-ից մինչև 10 տարի ներառյալ՝ 9 000 ՀՀ դրամ, 11 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 14 000 ՀՀ դրամ.

4) ակցիզային հարկի դրույքաչափեր են սահմանվել նաև ծխախոտի արտադրանքի համար:

6. *«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ու «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների համաձայն՝*

1) հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքները, բնակարանային շինարարությունը և ոռոգման ջրի մատակարարման գործարքները մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ազատվում են ավելացված արժեքի հարկից.

2) 2021 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող ձեռքբերումների, ընդունվող աշխատանքների կամ ստացվող ծառայությունների մասով հաշվանցումները կատարվում են հաշվեգրման սկզբունքով՝ մատակարարի հարկային հաշվի հիման վրա՝ հաշվի ստացման հաշվետու ժամանակահատվածում՝ անկախ փաստացի վճարում կատարած լինելու հանգանամքից.

3) էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը մինչև 2022 թվականի հունվարի 1-ը ազատվում են ավելացված արժեքի հարկից.

4) ծխախոտի արտադրանքի ներմուծման և (կամ) մատակարարման գործարքների դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում ծխախոտի արտադրանքի տուփի վրա կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Միաժամանակ, անմիջական ծխախոտ արտադրող կամ ներմուծող չհանդիսացող անձինք ազատվում են ավելացված արժեքի հարկից.

5) հստակեցվել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահը. մասնավորապես, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա լիզինգի առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման պահ է համարվում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը՝ լիզինգի պայմանագրով նախատեսված՝ հաշվեգրված լիզինգային վճարներին համապատասխանող չափով:

7. «Առևտրի հարկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի համաձայն՝ փոփոխվել է առևտրի հարկի դրույքաչափը՝ հնարավորություն ընձեռելով հարկ վճարողներին փաստաթղթերով հիմնավորված ձեռքբերումների մասով կատարել նվազեցումներ և առևտրի հարկը վճարել 1 տոկոս դրույքաչափով: Մասնավորապես, առևտրի հարկի դրույքաչափը իրացման շրջանառության նկատմամբ 2021 թվականի համար սահմանվել է 2 տոկոս, իսկ 2022 թվականի հունվարի 1-ից՝ 3 տոկոս՝ դրանից նվազեցնելով վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով փաստաթղթերով հիմնավորված ծախսերի 1 տոկոսը (2022 թվականի հունվարի 1-ից՝ 2 տոկոսը): Եթե նվազեցումներից հետո առևտրի հարկի գումարը կազմում է իրացման շրջանառության 1 տոկոսից պակաս գումար, ապա առևտրի հարկը կհաշվարկվի 1 տոկոս դրույքաչափով, իսկ չնվազեցված մասը կնվազեցվի հետագա հաշվետու ժամանակաշրջաններում: Ընդ որում, փաստաթղթերով հիմնավորման պահանջները սահմանված են կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 254 որոշմամբ:

8. ««Հաստատագրված վճարների մասին» օրենքում լրացում կատարելու մասին»
և ««Հաստատագրված վճարների մասին» օրենքում լրացումներ կատարելու
մասին» օրենքների համաձայն՝

1) ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն,
պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի
ծառայությունների մատուցման գործունեության համար սահմանվել է հաստատագրված
վճար՝ իրացման շրջանառության 5 տոկոսի չափով: Օրենքի այս դրույթը գործում է 2020
թվականի հոկտեմբերի 1-ից.

2) 2021-2023 թվականներին հաստատագրված վճար վճարողները ազատվում են
հաստատագրված վճարների կատարումից, բացառությամբ ավտոտրանսպորտային
միջոցների գազալցման (գազալիցքավորման), խաղատների, շահումով խաղային
ավտոմատների շահագործման, ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի
կազմակերպման, ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի
համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում
հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեության տեսակների:

9. ««Արտոնագրային վճարների մասին» օրենքում փոփոխություն և լրացում
կատարելու մասին» օրենքի համաձայն՝

1) 2021-2023 թվականներին արտոնագրային վճար վճարողները ազատվում են
արտոնագրային վճարների կատարումից.

2) արտոնագրային վճար վճարողների համար մինչև 2026 թվականի հունվարի 1-ը
հետաձգվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը:

10. ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» օրենքում
փոփոխություն կատարելու մասին» օրենքի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների
ներդրումը գործունեության այն տեսակների մասով, որոնց համար պարտադիր էր 2021
թվականի հունվարի 1-ից, երկարաձգվել է մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

11. ««Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի համաձայն՝ սոցիալական վճարների և կուտակային հատկացումների մասով մինչև 2021 թվականի հունվարի 1-ը սահմանված չափերը՝ ըստ մասնաբաժինների (մասնակից և պետություն) կգործեն նաև 2021 թվականի համար, իսկ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից աստիճանաբար կբարձրացվեն:

12. ««Հարկերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի համաձայն՝

1) ըստ նախնական պատվերների՝ համապատասխան պայմանագրերի համաձայն, պատվիրատուի ներքին սպառման համար նախատեսված օբյեկտներում հանրային սննդի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնողները չեն կարող օգտվել եռամսյա ժամկետով հաստատագրված վճարից ազատման արտոնությունից.

2) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով հաշվարկված հարկերի գումարը, Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը կնքված վարկային (փոխառության) պայմանագրերի հիման վրա ստացված ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների փոխհատուցման նպատակով վերադարձվում է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից տվյալ եռամսյակի կամ տվյալ կիսամյակի համար հաշվարկված հարկերի հանրագումարի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վարկի (փոխառության) և դրա սպասարկման համար վճարված տոկոսների գումարը՝ հաշվի առնելով օրենքով սահմանված սահմանափակումները: Օրենքի այս դրույթը չի տարածվում վարկային կազմակերպությունների, բանկերի, գրավատների, բնական գազի ներկրման, փոխադրման, բաշխման և գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման, էլեկտրական էներգիայի ներկրման, հաղորդման, բաշխման և արտահանման, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և

(կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման) լիցենզավորված գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վրա:

Վարկային (փոխառության) պայմանագրի համաձայն՝ ամսական կամ եռամսյակային վճարումներ կատարող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին վերադարձ կիրականցվի եռամսյակային, վարկային (փոխառության) պայմանագրի համաձայն կիսամսյակային վճարումներ կատարող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաև կիսամսյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող անհատ ձեռնարկատերերին՝ կիսամսյակային պարբերականությամբ:

Վերադաժման ենթակա հարկատեսակներն են՝ շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ, հաստատագրված վճարներ, առևտրի հարկ:

13. 2021 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «*«Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հարկացումների (մասհանումների) մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքը:*

14. «*«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների համաձայն՝*

1) ընդերքօգտագործման թափոնների տեղադրման և պահման համար 2021 թվականի հունվարի 1-ից սահմանվել է բնապահպանական վճար՝ չափերը պայմանավորելով վտանգավորության դասերով.

2) փոփոխվել են հատուկ հատկացված տեղերում՝ արդյունաբերական հրապարակներում, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման կամ պահման համար բնապահպանական վճարի չափերը: